ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 118

«22» դեկտեմբերի 2020 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 88 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 01//10857-2020 գրությամբ ներկայացրած առարկությունները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր՝ Մարմաշեն) համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Սաթենիկ Վարոսի Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված շինությունները և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին>> թիվ 88 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. որոշման նախաբանում <<39-րդ կետի>> թվերն ու բառերը փոխարինել <<35-րդ կետի <<գ>> ենթակետի>> թվերով և բառերով:

2□որոշման 1-ին կետում <<466600 (չորս հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր)>> թվերն ու բառերը փոխարինել <<605000 (վեց հարյուր հինգ հազար>> թվերով և բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝			
Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝			
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝			
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝			
Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝			
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝			
Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝			
Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝			
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«22» դեկտեմբերի 2020 թվական
գյուղ Մայիսյան